

Հ Ա Ն Դ Է Ս

40 Փ Ա Ր Ա

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն ե ի Բ Ա Ղ Ա Բ Ա Կ Ա Ն

Փ Ա Ր Ա 40

ԾԱՂԻԿ արարք երկու անգամ կը հրատարակուի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերն: — Տարեկան բաժանորդագրութեան գինն է 100 դրս արծար: — Վեցամսեայն 50. — Իսառուաց համար 115 դրս. Վեցամսեայ 60. — Ծանուցման տողը 5 դրշ.

Որ եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել. Առ Արսոնաէր եւ Տնօրէն Անտոն Սախան, Էսկի Չապրիյէ ճատտէսի Նշան Է.Ֆ. Պարպերեանի Տպարանն Խմբագրութեան յանձնուած գրութիւնք եւ չեն տրուիր:


ԹԻՒ 243 Գ . Տ Ա . Բ Ի

1889

ՕԳՈՍՏՈՍ 13 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ազգային. — Սկիտարու Ս Խաչ վարժարանք. — Եկնիդափուէնարձագանգ մի. — Ա. Ե. ցեղութիւն մը. — Ասիէ անկէ. — Ծաղկաբալ. — Միւթէնէվիէ. — Տիկին Բանդալուն (Վիպասանութիւն):



Ամեն Ս. Պատրիարք Հայրն, իւր հետն ունենալով գործակաւար վսեմ Արրահամ Էֆէնտին, շարաթ օր կարն պալատ դնաց ի շնորհատորութիւն վեհ. Կայսեր գահակալութեան տարեդարձին, Նորին Ամենապատուութիւն ընդունուեցաւ երկօրոգ սենեկապետ Հաճի Ալի պէյի կողմէ. որու յանձնեց ուղերձ մը, յանուն Հայ ազգին շնորհաւորող Ն. Կ. վեհափառութեան գահակալութեան տարեդարձն:

Վսեմ. Հաճի Ալի պէյ ի գիմաց վեհ. Սուլթանին Ս. Պատրիարք Հօր հաղորդեց Ն. Կ. վեհափառութեան կայս. բարեւներն և բարձր գոհունակութիւնը:

Շարաթ գիշեր Ազգ. Պատրիարքարանը սքանչելապէս զարդարուած էր կանթեղներով և գոյնզգոյն լապտերներով: Պատրիարքարանի բակին մէջ բազմած էր Ամեն Ս. Պատրիարքն, իւր շուրջ ունենալով Գեր. փոխանորդ Հայրը, Մայր եկեղեցւոյ քահանայները, Մայր Իււանը, նոյն եկեղեցւոյ Թագախորհուրդն և թաղին երեւելի ազգայինները: Ժողովրդեան ստուար բազմութիւն մը ներկայ էր այս գիշերային փառաւոր լուսավառութեան հանդիսին: Մայր վարժարանի երկսեռ աշակերտք վեհ. Սուլթանի անուան ձօնակալ երգեր երգեցին:

Ամեն Ս. Պատրիարք Հայրն ջերմ շնորհաւորութիւններէ վերջ բարեմաղթութիւններ ըրաւ վասն կենաց և բարօրութեան վեհ. Սուլթանին, նոյնպէս Ազնուաշուք Տօքթ. Թիրեաքեան Էֆէնտի բանախօսելով ի դիմաց Ազգ. Ժողովոյ շնորհաւորեց վեհ. Ապտիւլ-Համիտ կայսեր երեքտասաներորդ տարեդարձն և բարեմաղթութեամբ վերջացուց իւր խօսքն: Ներկայք ծափահարելով գոչեցին. «Կեցցէ՛ վեհ. Սուլթանն»:

Ամեն Ս. Պատրիարք Հօր կողմէ Գեր. փոխանորդ Հայրն և Ազգ. Ժողովոյ Ատենադպիր Մ. Էֆ. Մելիքեան,

Ազն. Տօքթ. Թիրեաքեան Էֆ. ի տունն երթալով շնորհաւորեցին Ն. Կ. վեհափառութեան գահակալութեան տարեդարձն:

Սերաստիոյ Առաջնորդ Գեր. Պետրոս և Եօզղատի առաջնորդական տեղապահ Գեր. Արրահամ եպիսկոպոսունք հրատարած լինելով իրենց պաշտօնէն, Ամեն Ս. Պատրիարք Հայրն չէ ընդունած նոյնին Սրբազնութեանց հրատարականները:

Գոհութեամբ կը լսենք թէ վեհ. Սուլթանն բարեհաճած է Բ. կարգի Մէճիտիյէ պատուանշան տալ, Հայ բժշկական դատու երիցագոյն անդամոց միոյն Տօքթ. Խորասանճեան Էֆէնտի:

Կայս. թիկնապահ մը երկուշաբթի առաւօտ Ազգ. Պատրիարքարան գալով յանձնեց կայս. պալատան առաջին քարտուղար Սիւրէյա փաշայի մէկ գիրքն, որ ծանուցանելէ յետոյ թէ վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձին առթիւ Ամեն Ս. Պատրիարք Հօր կողմէ ներկայացեալ ուղերձը մատուցած է Օգոստափառ վեհապետին, կը հաղորդէ Ն. Կ. վեհափառութեան

բարձր գոհունակութիւնն : Ահաւասիկ այդ գորոյն պատճէնը :

Էրէնի Բ-Բրէնի Բե-Բրէնի Էֆէնի
հաշտէնէրէնէ

Ճիւղուսի մէյամին մէնուսի հազրէթի Խիլաֆէթֆէննա՛նի եէվմը մէսուտունըն շէրէֆ հուուլինտէն տուայը ճէմասթլարը նամընա թէճտիտի ուպուտիլէթ՞ վէ արզը թէպրիք ու թէնիլէթի հափի թապտիմ գըլընան ա-րիւյէ՛ պէնիլէթի մանդուրը Ալի վ պու սուրէթ մուճիպը մահուզիլէթի ճիհանգըյ-մէթի ճէնապը Փատիլա՛նի օլմաղին խէպշի-րը քէյֆիլէթէ իտթիտար գըլընաը, Էֆէն-տիմ :

Փիյ 5 մուհարրէմ 307 վ:

Փիյ 20 ադ-սիմ 305

Որ Էրէնի Էրէնի Էֆէնի
Սիւրէնէն

Դատական և կրօնական գործոց վսեմ՝ նախարարին կողմէ առ Ամեն Ս. Պատրիարք Հայրն ուղղեալ պաշտօնագիր մը, որ երկուտրթի օր Պատրիարքարան հաղորդուեցաւ, կը ծանուցանէր թէ նոր Քաղ. Ժողովոյ ընտրութիւնը վաւերացած է:

Աղեքսանդրիոյ աղգայիններէն վըսեմ Պօղոս Պէյ Ալըքեան, ըստ իւր բարի սովորութեան, այս տարի եւս յիսուն զամբիւղ բրինձ նուիրած է Աղգային Հիւանդանոցին, Պօղոս պէյ նոյնպէս հինգ զամբիւղ բրինձ նուիրած է Գալֆայեան Որբանոցին և հինգ զամբիւղ եւս Խասգիւղի սղբատաց, ձեռամբ թաղին քարոզիչ Արժ. Յ. Ա. շոտ Մ. վարդապետին :

Ոոյն առատաձեռն նուէրք որք Հիւանդանոցի պատասպարեալները, Գալֆայեան որբուհիներն ու բազմահայ թաղի մը աղքատիկ բնակիչները մխիթարելու սահմանեալ են, երկուշարթի օր մայրաքաղաքս բերուեցան Խըտիվիլէթի շոգենաւով և անոնց յանձնու-մը կատարուեցաւ երէկ :

ՍԿԻԻՏՈՐԻ Ս. ԽԱՉ ՎԱՐԺԱՐԱՆՔ

Սկիւտարի Ս. Խաչ վարժարանաց Հոգաբարձութիւնը դպրոցական վերամուտին առթիւ հետեւեալ յայտարարութիւնն ուղղած է Սկիւտարի բընակչաց :

Ազնիւ Սկիւտարցիք :
Ձեր վարժարանաց Հոգաբարձու-

թիւնն, բարեյաջող տարի մը բոլորած, կուգայ ծանօթացնել Ձեզ՝ վիճակն ձեր վարձարանաց :

Բարենորոգմունք, զորս ի գործ դրինք ի վարժարանս, զգալի կերպիւ բարձրացուցին սօցա դիրքն. և ընդ փոյթ 170է հասուցին մեր աշակերտաց թիւն 320ի, և որ տակաւ աւելնալու հետամուտ է. ծնողաց այս քաշակերիչ ընթացքէն սիրտ առած և նոյնքան զօրացած յամենուստ և ի մասնաւորի երկուց թաղից Պատ. Խորհրդոց օժանդակութենէն, յառաջ մըղեցինք մեր գործն, Աղգ. Կեդրոնական վարչութեան 6 դասարանեան ծրագրի գործադրութիւնն յանձնեցինք կարող ուսուցչական մարմնոյ մը զի այդ ծրագիր որքան լինէր կատարեալ, անօգուտ պիտի դառնար, եթէ զայն ըստ արժանւոյն գործածող ձեռքեր պակսէին : Կարող ու մասնագէտ դասատուներ մեզ պէտք էին. այդ թերին եւս լեցուցինք, սա հաւատքով թէ մեզ նկատմամբ ցոյց տրուած համակրութիւնն եւս առաւել պիտի կրկնապատկուի, և այսօր խղճի կատարեալ հանդարտութեամբ կրնանք յայտարարել թէ Ս. Խաչ վարժարանն եւս է մին յաղգային օգտակար հաստատութեանց :

Մասնաւոր հոգածութեան առարկայ եղած է աղջկանց վարժարանն ուր ընդ հսկողութեամբ Պատ. Խնամակալուհի Տիկնանց, Ֆրանսերէն կ'աւանդուի նաեւ Ֆրանսացի վարժուհւոյ մը կողմանէ : Ձեռագործ աշխատութիւնք և ձեւագիտութիւնք իրենց ամեն ճիւղերով կ'աւանդուին, նոյնպէս դաշնակ, երաժշտութիւն և մարմնամարզ կարող մասնագիտաց կողմանէ : Սոյն յիշատակեալ առարկայից համար կ'ընդունին նաեւ այցելու աշակերտուհիք :

Հոգաբարձութիւնս ուրախ է որ կրցաւ վերջնականապէս իրականացեալ տեսնել իւր մի փափաքն, Մանկապարտէզն. այլ որքան ճիգ ու զոհողութիւնք, Յուսանք սակայն զի մեր վարժարանի փառքն այդու լինի նոյնքան մեծ, Արդէն շուրջ 20 երախալք կը յաճախեն ի մանկապարտէզ որ ընդ վերին հսկողութեամբ Ազն. Տիկին Գայիանէ Մատակեանցի, Սոյն հաստատութեան ապագայն պիտի լինի

այնքան մեծ ու արդիւնաբեր, որքան ծնողք համողւին թէ անցած է այլ եւս վարպետ տուտուներու, և կամ քիչ շատ ասարբերութեամբ դպրոցներու, և կամ էապէս խամբոցներու դարն :

Իսկ գալով Հոգաբարձութեանս նիւթական կացութեան, չէ դադրած գոհացուցիչ լինելէ, թէեւ ներկայ շրջանի մէջ ի նպաստ վարժարանի ձեռնարկն կը մնայ դեռ անկախ. և էր մեր նիւթական կացութիւն ստանայ յոռի գոյներ, երբ չի խնայուիր ի մէնջ աշխատութիւն և յամենուստ համակիր տրամադրութիւնք. և մասնաւոր համողումն թէ հանդէպ մի ո և է պէտքի կրնանք վստահօրէն դիմել առ Պատ. Թաղեցիս, եւս առաւել կ'ամրապնդէ դմեզ ի մեր գործ : և արդեօք երբ այս պատուական ժողովուրդն մերժած է ինչ որ ուղած են իրմէ իւր վարժարանաց համար :

Վարժարանիս վերամուտն է ի 15 օգոստոս երեքշաբթի օր. կը խնդրուի զի Պատ. ծնողք հաճին ճշգրտապէս լինել յղելու նոյն օր ի վարժարան իրենց զաւակունքն, նոյնքան ճշգրտապէս լինելով վճարմանց, որք արդէն մեծ գումարներ չեն ենթադրեր :

Հարկ է արդեօք կրկնելու մեր հրաւեր առ համայն ծնողս Սկիւտարցի, յանձնելու մեզ իրենց զաւակաց կրթութիւնն, լաւ խնամք, կատարեալ հոգածութիւն, ընտիր ծրագիր, ուսուցչական էապէս մի պատուական խումբ և դեռ ի՞նչ կը պահանջուի արդեօք. կ'արժէ քիչ մը լրջօրէն գընահատել այս պատկառելի հաստատութիւն, որ է և միշտ պիտի լինի ազբիւր լուսոյ մեզ Սկիւտարցուցս :

Ս. Խաչ վարժարանի սուրբ խաչ պահապան ու օգնական :

Ի Դիմաց Հոգաբարձութեան

Ատենադպիր Ատենապետ
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ ՊՕՂՈՍ ԱԻԳԵՐ
Սկիւտար, 8 օգոստ. 1889

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ

ԴԻՇԵՐՈՅԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Ի Ի Ս Կ Ի Տ Ա Ի

ՁՈՐԻՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Վարժարանիս յառաջիկայ շրջանը կ'սկսի սեպտեմբեր 1, ուրբաթ:

Աշակերտաց ընդունելութիւնը տեղի կ'ունենայ նոյն օրէ սկսեալ:

Դասուց սկզբնաւորութիւնը պիտի լինի սեպտեմբեր 11, երկուշաբթի:

Նոր աշակերտ տալ փափաքող ծընողք կը հրաւիրուին տեսակցիլ մեզ հետ վարժարանիս մէջ:

Հիմնադիր—Տնօրէն Ռ. Յ. Պերդերեան

1889 օգոստ. 19

ԵՆՆԻ ԳԱՐՈՒԷՆ ԱՐՁԱԳԱՆԳ ՄԸ

Երկուշաբթի է, այսինքն Աստուածածնայ տօնին հետեւեալ օրը. սուրբ է օրն, ինչպէս և սրբաՎայր մըն է մեր գտնուած տեղն ալ. և կեղեցական տօնին հետ, կրթական տօն մըն ալ ունինք Մեչտուածեան երկսեռ վարժարանին մէջ, որ սիգանօք կը բարձրանայ Եկնի Գարուի տաճուկ երկնից տակ և ծովափան ժայռերուն վերեւ: Երկսեռ ընտրելագոյն բաղմութիւն մը գրաւած է հանդիսավայրն, ուր ծիրանեգոյն բեհեցներու և ձեռակերտ պատկերներու մրցում կայ. ճառարտուութեանց բեմն ալ պուրակ մըն է կարծես յաղթական գրօշներու, որք առտուան մեղմանոյ սիւքին տակ ծալի ծալ կը ծածանին ալեծուփ. խոր ու խորհրդաւոր լուութիւն կը տիրէ սրահին մէջ, զոր միայն կը խառովեն շրջադէտներու թեթեւ շրջիւնն ու անգութ մրտեխներու յամր մրմունջըն, որք՝ ամեն խաղի վրայ նուագախումբ կազմած՝ կը բզզան ու կը տղզան ակունջիք ներքեւ, մերթ կանգ առնելով քնքուշ այտերու կամ մարմարեայ պարանոցներու վրայ ու մերթ խայթ մը տալով առնացի կաշեայ դէմքերու: Դեռ ժամանակ կայ հանդիսին սկզբնաւորութեան:

Թեթեւ զեփիւռի մը պէս անլսելի խօսակցութիւններ կը թռչտին վարդագոյն շրթունքներէ, որք հակապատկեր մը կը կազմեն այն շինական վլվլուկին հետ, որ ոչ մայրենի բարբառով խառնամառն կը սահի կ'ողորտանայ տղեղ սեւին անտաշ բերաններէն: Ամեն աչքը պատերու յառած են հիմակ, կարծես անծանօթք փրտտուելու. խօսակցութիւնք պատերու վրայ կը դառնան. զի պատերուն վրայ է հիմակ խօսակցութեանց նիւթը. պատկերներ կը տեսնուին հօն աշխարհական ու կրօնական անձնաւորութեանց, զորս նկարած են երկսեռ ուսանողք բաւական մեծ աջողակութեամբ. անդ կը նշմարես նար-Պէյ Սրբազանն, իր երիտասարդ տիկոց մէջ, իր երազի ու ցնորից տարիքին մէջ, ճակատը բաց և սեւաթուխ մազ'րը կը թռչտին օդին մէջ. նայուածքն ալ, կեցուածքն ալ կախարդիչ է, բանաստեղծական է. իր թարմ ճակտին տակ հանճար կը կարդաս և իր աչերուն մէջ իմացականութիւն. կանացի և առնացի դէմքեր հօն յառած են միապէս, սա տարբերութեամբ որ մին՝ կը նազի կը յօրանայ հողմահարներու ծփանաց տակ. և միւսն կը խնդայ կը ծիծաղի անցեալ լիշատակաց մոխիրները խառնելով: Ես ալ նայուածքս կը խառնեմ այդ խոր ու անթարթ հայեցողութեանց մէջ և ես ալ կը դիտեմ բաշխաց հեղինակն, որ կարծես կենդանութիւն առած՝ ինքքն ալ կը պատասխանէ նազելանոյ ժպիտներու:

Այդ հմայիչ տեսարանէն արբշխուակնարկ մըն ալ կը ձգեմ Մարմարային վրայ, որ, իբրեւ մարմարի անծայր սաւան, կը տարածուի երկնից կամարին տակ, մերթ ալեաց մանրիկ գանգուրներ հանելով և մերթ յուշիկ իմն կոծելով վարժարանին վաղջական հիմերը: Բոցածաճանչ արեւուն ջերմին ցոյքերն ալ կը փողփողին ծովուն թափանցիկ յատակին վրայ, որ անհունութիւն մըն է անհունութեան տակ և կամ բանաստեղծութիւն մը՝ բանաստեղծութեան մէջ:

Յանկարծ եօթն կը հնչէ մերձաւոր ժամահարի մը հուժկու շփշփշին, որուն արձագանգը դաշնակին անոյշ ձայնին կը խառնուի. ոտքի կ'ելնենք:

Հանդէսն սկսած է և Գեր. Մեյքիսեղեկ Սրբազանն է որ յառաջ կուգայ, իր հետն ունենալով վարժարանին պատկառելի տնօրէնն ու Մարգարեան Վահրամ էֆէնտին. նոյն մարզն է Մուրատեանց, նոյն առոյգ տիպարն, նոյն հանճարի անձնաւորութիւնն. իր ճակտին վրայ տազնապ չես տեսներ և ոչ իր կեցուածքին մէջ մեղկութիւն. ժպտուն է, աշխոյժ է, խիզախ է. իր նայուածքին մէջ իմացականութեան անըմբռնելի ցոյք մը կը նշողէ, որ շատ հասարակ չէ մեր խաչի պաշտօնեայներուն քով: Իր մօտ բազմած է իր անբաժանելին՝ Մարգարեանն, որ ազգասիրութիւնն ու ճշմարտասիրութիւնը մեծ բան կարծես մեր կեղծ ազգասէրներուն վրայ. իրօխտ է վահրամ իր դիրքին մէջ. եզիպտական կուռքի մը նման կը բռնէ իր գլուխն, փչքը յառած բեմին և ականջը տուած նախադահին: Ապա հետզհետէ կը հասնին Մամթիոց քարօղիչ Գեր. Ջահան վարդ. Յակոբեան, և այլ եկեղեցական հարք: Հայ ժերին կը յաջորդէ Հափէյե չուերգն, երկուքն ալ անոյշ ու խորհրդաւոր: մին՝ երկնաւոր աղօթք մը մեր հանդէսներու սկզբնաւորման և միւսն՝ երկրաւոր մաղթանք մը մեր սրտերու երախտագիտութեան: Ապա վարժարանին դէր-տնօրէն վարդան էֆ. Մէչտուածեան խօսքի՝ առնու տեղեկագիրը կարգալու համար. նոյն համեմատ գրուածքն է և նոյն կոկիկ ոճը. հօն չես գտներ այն մեծամիտ յաւակնութիւնը, զոր Պէրպերեան դրաւ իր մրցանակաբաշխութեան առթիւ կարգացած բացման ճառին մէջ. միայն տեղեկութիւններ կ'առնու վարժարանին կրթական վիճակին և մանկավարժական ուղղութեան վրայ և կը համոզուիս թէ վարժարանն իրաւամբ կրնայ մրցիլ իր նմաններուն հետ:

Յաւարտ ընթերցման տեղեկագրին, կը սկսին ճառերն ու մրցանակաց բաշխումն. բեմին վրայ, դրօշակներու այդ պուրակին մէջ՝ խօսուն թըռչնիկներ կը ճուռողեն, այլ և այլ լեզուներով և այլ և այլ եղանակաց վրայ. մանր ու խոշոր, թուխ ու խարտեաշ ուսանողներ կուգան ու կը դառնան, մին՝ գրքերու փունջ մը առնելով իբր վարձատրութիւն իր տըք-

նութեանց և ուրիշ մը՝ ակադրիմական լուսններու պէս՝ դափնեայ պօսկներ ընդունելով Մուրատեանց Սրբազանէն, կը ծափուի յառաջդիմութիւնը, հըրճուանաց արցունքներ կը ցոյան ծնողաց աչերուն մէջ, որք աղամանդեայ հատիկներու հանգոյն վար կը սողան յամբարար: Պահ ընդ մէջ ալ կը թրթրուայ դաշնակին մեղամոզճիկ ձայնն, որ տխուր հառաչներու և զուարթ աւաշներու խառնուրդ մը կը նետէ մերականջներուն տակ: Դաշնակահարը Պ. Գալուստ Մէշտուտճեանն է, մուսայից սան մը և սիրահար այս թրթրուն բանաստեղծութեան, որ ապագայի խօստումներ ունի իր ճակտին տակ: Բայց երբ թրթրուն բանաստեղծութեան վերայ կը խօսիմ, կրնամ անյիշատակ թողուլ Միհրան էֆ. Ճէրրահեանն ալ, այս տոգոյն բայց կախարդիչ երիտասարդն ալ, որուն առ Վեհ Սուլթանն ձօնեալ նոր մաղթանքն այնքան յուզեց ու տրտմեցուց մեզ այն օր: արուեստին ամեն նրբութիւնները կը փայլէին հոն. զի նուագողը մեր մուսայից զաւակն էր և մարդ իրաւամբ կը մտածէր թէ այս ճարտարագոյն երգը մեծ առաւելութիւններ ունի Պէշիքթաշի երաժշտին երգին վրայ և որով իրաւամբ կրնան պարծիլ հեղինակն ալ, իր բարեկամներն ալ:

Այլ և այլ ճառախօսութիւններէ ետեւ, սիրուն կոյս մ'ելաւ բեմին վերայ կեցաւ. խարտեալ վարսերու քրնքուշ թաւուտ մը իր դէմքը կը շրջանակէր և կաթնորակ ճակտի տակ զօյգ մը հրուտ աչեր կ'երերային. այն ինչ իր շրթներէն դուրս թռան ԵՐԱՂ ՈՒՆՈՅՆ բառերն, երիտասարդ մը տըժգունեցաւ հանդիսականաց մէջէն և ժպիտ մը ծածանեցաւ Վարդան էֆէնտիի դէմքին վրայ. ոտանաւորն՝ երազի բուռն վայրկեաններու մէջ գըրուած՝ ասկէց առաջ տպուած էր Մախի մէջ, ուրկէց քաղելով Վարդան էֆ. Մէշտուտճեան և դնելով այդ խարտեալ պարմանուհոյն լեզուին վրայ, առանձին մը կ'ընէր հեղինակին, որ կը տոգունէր նորա ծիծաղին հանդէպ. քաղցր հակապատկեր, որ անշուշտ հոգեբանական նշանակութիւն մը ունէր. ներկայացուցին երիտասարդն Մուրատեանց Սրբազանին, որ իր շրնորհաւորութեանց մէջտեղ, երիտասարդ

Բանաստեղծ ալ կոչեց զայն. միջադէպ մըն էր այս, կամ երազ մը՝ ունայն երազի մը խուսափուկ րոպէներուն մէջ ծալուած:

Յաւարտ մրցանակարաշխութեան խօսք առաւ ԵՐԱՂ ՈՒՆՈՅՆ հեղինակն ու երկու խօսքի մէջ վերջացուց իր ընտիր բանաստեղծութիւնը. վարանում չկար իր խօսուածքին մէջ. բառերը կարծես անդիմադրելի հոսանքէ մը մղեալ՝ թաւալգոր դուրս կը նետուէին և կը թովէին հանդիսականները. ըսաւ թէ, նոր չէր որ կը ճաննար վարժարանին հիմնադիր տնօրէնն, Մէշտուտճեան Գեորգ էֆէնտին, այլ արդէն իսկ ծանօթացած էր նմա Ռուսմանիոյ մէջ, երբ սա հայութիւն սորվեցնելու գացած էր հոն և պատշաճ բանիւք դրուատեց նորա անդուլ և երկարամեայ ջանքերն ու տքնութիւններն իմասին ազգային ու մտաւորական յառաջդիմութեան. ապա ատեան բերուեցան երկու շրջանաւարտ աղջիկներ, օրիորդք Մարիամ Փափաղեան ու Էօթէն Փէսլեան, որք ծլած ու փթթած էին ուսմանց այս ծաղկաստանին մէջ. Մելքիսեդեկ սրբազան՝ գիտակից իր պաշտօնին՝ քաջալերական խօսքեր ուղղեց անոնց և յորդորեց նոյն եռանդեամբ շարունակել այն ուղին յոր քալել սորվեցան այս կրթական տաճարին մէջ և Պահպանելով փակեց հանդէսն ի ժամ 10, ուր այնքան զբօսուցիչ ժամեր անցուցինք և որ՝ իր համեստութեան հետ մէկտեղ՝ այնքան քաղցր տպաւորութիւն գործեց հանդիսատես բազմութեան վրայ:

ՍԼԱՔ

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

Տիկին մը առտու մը կանուխ հագուած սգուած տունէն դուրս կելնէ և իր դրացուհոյն հանդիպելով՝ անոր հետ միատեղ իւր տղուն տեղ մը գաղտնի աղջիկ տեսնելու կերթայ:

Երկուքնին իւր կէս ժամ կամ երեք քառորդ ճամբայ քալելէն յետոյ, փառաւոր տան մը մօտերը կանգ առնելով կըսէ իւր ուղեկցին:

— Ճանրմ քուրուկ, ալ իմ վրաս ճար չմնաց, ես կամայ կամաց ետե-

ւեղ կը գամ: Ես առաջ անցիր տէ տա դուրս գարկ:

— Գլխուս վրայ, կը պատասխանէ ընկերը ու կոտորուելով մը կերթայ իրեն ցոյցած դուռը կը դարնէ:

Դուռը խփոյն կը բացուի, օրիորդ մը դիմացնին կելնէ որ այս երկու անձանօթ կիները տեսնելուն պէս, թռչնոյ նման տան վերի յարկերը կը սլանայ, ասոնց գալը մօրն իմացնելու համար:

Օրիորդին մայրը որ քաղաքավար տիկին մ'էր, վար իջնելով՝ մեծարանօք կը դիմաւորէ հիւրերն և անոնց ո՞վ և ի՞նչ բանի համար եկած ըլլալն հասկնալէ առաջ՝ քաղաքավարաբար կըսէ:

— Հրամմեցէք տիկնայք:

— Իստէր խտէմէղ պիտի հրամմենք, կը պատասխանէ մէկէն Կ. կօշտաբար. զերէ առաջվընէ պէրի է ճամբայ քալելով վայնի վրանիս էկաւ, հալէ քըրէ ելանք:

Եւ ինչ նպատակաւ քալելնին ալ յայտնի չընելու մտօք կը յարէ:

— Պարէմ Աստուած տար տէ պարապ չելլայինք:

— Բայց զօ՞վ կը խնդրէք տիկնայք:

Կ. այս խօսքերէն բան մը չհասկը նայով՝ Լ. ին թեւը մտած վեր կելնէ և ընդունելութեան յատուկ սրահին դուռը բաց տեսնելով ներս կը մտնեն, ուր թաւապատ աթոռներու վրայ նստելով կսկսին հետեւեալ խօսքերը իրարու փոխանակել:

— Լ. հոգիդ սիրես ուզածիդ պէս նստէ. էյէր հօսրահաթ չեղար նէ՛ ել մինաէրի մը վրայ նստէ:

— Ատ ի՞նչ ըսելի է Կ. (ու աշխուժի նստած տեղէն՝ ելնելով գետինը ձըգուած գորգին վրայ կը փռուի ու կը կրկնէ:)

— Հա չէօյլէ մարիկ, մեղայ, հոս ո՞ր դի ուղեմ կրնամ օր էրէրայ, ատոնք ի՞նչ է, մօտա է տէյի ափուճներով դուրուշ կուտան տէ կառնեն. տէյ կիտի մեր վախիթին չաթմա էրէսով չաթմա մախաթով բուրթ պարձերը ու սէտիրները, մարդ վրանին նայեր նէ քէֆը կուղար. թէվէքլի չէ քի հիմակուան ճահիլները երկու ճոթը իրարու չեն պերեր կոր ա. ան չէ ամա Լ. ասոնք մար վախճիկ ո՞ւր մնացին:

Այս միջոցին տանտիկինը ներս կը մտնէ ու բարի եկաք ըսելով մէկ կողմ աթոռի վրայ կը նստի .

—Պարիտ շատնայ , կրտէ՛ւ , ինտոր էք նայինք , աղէ՛կ էք , ընի՛նտ էք , չօճուխներն ի՛նչ կընեն :

—Գոհութիւն ճեռան , ձեր պատուական կենաց որպիսութիւնը կը հարցունեն :

Կ. այս խօսքէն բան մը չը հասկը նալով ոտք կեղնէ ու Շ.ին ականջնի վար կամացուկ մը կըսէ .

—Շ. ապա , պան մը հասկցար :

—Կիրքէվարճա պան մը ըսաւ ա. մա , իրաւոր աղէկ մը ֆարդին չը կացի :

Կ. շիրթած բան մը պատասխանած ըլլալու համար կըսէ :

—Հաճի աղան ինտոր է :

—Քաջառողջ է . բայց տիկնայք ներքին է արդեօք որ ղձեզ ճանչնալու պատիւն ունենամ :

Կ. դարձեալ բան մը չի հասկնալով այս խօսքէն , կը դառնայ կըսէ Շ.ին :

—Բուրուկ , օտկգ պագնեմ ի՛նչ ըսաւ :

—Մասիս պարին վկայ օր բան մը չը հասկցայ . կիտնայի նէ տղաս ասոր տրպատուն չէի խրկեր տէ կառնէի հետս կը պէրէի . վա՛խ , վա՛խ :

—Քէչկէ անանկ խէր մը ընէիր . աճապա ի՛նչ աղէկ պիտի ըլլար . ՚ի. մայ ասոր խարչըլը ի՛նչ ճուղապ տալու է :

—Հոգդ ես ըրեր , ճանըմ քուրուկ . դուն քու կիտցածդ խօրաթէ ան ալ թող իր կիտցածը ըսէ :

—Ատանկ պան կըլլայ հիշ :

—Ինչո՞ւ չըլլար :

—Էյ կըլլայ նէ կտորճիկ մը դուն խօրաթէ հետը :

—Ինձի՞ է մնացեր կիրքէվարճա լախըտը ընելը :

—Էյ ինձի՞ է մնացեր :

—Որո՞ւն տէրտը :

—Եա՛ , ատանկ հէ՛ :

—Էօյէ եա ըսաւ Շ. ձայնը բարձրացնելով և մարմնոյն բոլոր երկայնութեամբը գորդին վրայ տարածուելով դուն քու տղուդ համար աղջիկ տեսնալ եկեր ես , իմին ի՛նչ պէտկիս պան քի կայնիմ տէ էրկան պարակ հօմրիւս մէջ չսած կիրքէվարճա լախըտընեքը հասկնալու համար զէյին հոգնեցնեմ .

չօգ չէյ . կընա ի՛նչ կուզես նէ ան ըրէ :

Տանտիկինը այս խօսքերէն անոնց միաքը հասկնալով , տեղէն կեղնէ և գլխովը զիրենք բարեւելէն յետոյ դուրս կեղնէ :

Հինգ վայրկեան ետքը տանը ըս. պատաւորը ներս մտնելով երկու տիկնանց սուրճ կը հրամցնէ . գաւաթներն առած միջոցին կըսէ :


—Տիկինը իր աղջկանը հետ հիւր երթալու պատրաստուած ըլլալուն , կը խնդրէ ձեզմէ խոնարհարար որ դուք ալ ձեր տունը վերադառնաք :

Կ այս խօսքերէն դարձեալ բան մը չհասկնալով և իր ընկերէն ալ չհամարձակելով բացատրութիւն պահանջել , նստած տեղէն կեղնէ ու կըսէ ,

—Էյ կայնէ քուրուկ . դուրս ի՛նչնանք սքկէ , կտորճիկ մը խելք ունիմ հիմայ ան ալ կլխէս կերթայ , քա վայ պանա , կիրքէվարճա լախըտը մըն է առեր անցեր են , սօն տարիքովս խելքի՛ս պիտաոր պերէն . քա՛լէ . տէ՛ էրէրա :

—Մուստահախ ըլլայ քեզի , կը պատասխանէ ընկերը , մուստահախ ըլլայ քի , կարողութենէդ վեր կործերու մէջ մտնալու տօլապ կընես , խօսք ալ մտիկ չես ըներ , խաֆայիդ հաւներ ես . դօրօվէն հալիւր վրագ խընդացունել կուտաս . առաջուց օր ինձի կըտորճիկ մը իմացուցած ըլլայիր նէ , քեզի կառնէի էսնաֆի մը տուն կը տանէի . մեղայ պուլունմայաճախ հինտ խոււմաչի չէ եա՛ , խըթըլին է . հէ՛մ մեզի կէօրէ իրարու լախըտը ալ կը հասկնանք . պան մը ան ինձի ըսէ նէ , պան մըն ալ ես անոր կըսեմ :

Այսպէս խօսելով երկու տիկնայք ձեռնունայն տունէն դուրս կեղնեն :



Միւսիւ , նա՛սըլըն :

—Իչէրի կէլ պիրագ կէօրիւչէլիմ . մատմազէլ , գաբուլու աչ միւսիւ կէլտի .

—Օ , հօչ կէլտիինիզ ճանըմ , նա՛սըլ

օլտու , նէ՞ ըրկղեար էստի :

—Աֆ էտէրսինիզ մատմազէլ , պիւլիւսինիզ քի քէօրտէն աշաղա տահա էնմէտիք . պու հաֆթա պառպամըն մայասըլը էյի օլուրսա էնէճէիզ , պունտան պէօյէ չօգ կէօրիւչիւրիւզ :

—Մաշալլահ , գաբուլարտան սըղամազ օլմուշտունուզ . միւսիւ , ձբրճըր սուլու չօգ եարամըլ օլմալը :

—Պէնտէնիզտէ էօյէ կէօրիւյօրըմ , պօչ եէրէր տօլմուշտան պիր շիքլիք կէլմիշ իւսթիւնիւզէ :

—Աֆֆ էտէրսինիզ մատմազէլ , շըտտէն տօնտուրմասընա պէնզէլմէյինիզ պէնտէնիզի :

—Մատմազէլ էյ , շագանըն վագթը տէյիլ . պրագ պիրագ կէօրիւչէլիմ :

—Ղաղէթա օգո՞ւյօրմըսըն մօնչէա :

—Էվէթ մատմազէլ . պրագ ճանըմ , պիր թագըմ աղգայինճէ իչէր , բայց բայց սօնու եօգ :

—Վո՛ւլ պարիթ օլտուն , նէ՞րտէն տէ պուլույօրլար : կէչէն կիւն միւսիւ օգուեօր ըար , էրմէնիճէ եազմըլ քի գարըլարըն ոիւսի օլմասալըտը պէնիմ իչին տահա էյի տիր տէմիշէյ սիճէրէլի խօրեաթճա պիր լաֆ . պու սիվիլիզա սիօնա գարըլ տէյիլ մի միւսիւ :

—Չօգ տօզրուսընըզ մատմազէլ , ֆագաթ ծնլար ժուրնալիսթ տիրլէր . գալէմին սաղընա սօլունա պագմազլար . սիղլէր մէրագ էթմէյին :

—Ինանըրսան պու հագգա պիր թահգիր մէքթուպու եազաճաղըմ , վարսըն աննասընլար մատմազէլլէրին տմոււփուփուր սահիպի օլտուգլարընը :

—Էյ էֆէնտիմ , միւսիւ , ատէօ , կէճ գալտըմ կիթմէք լազըմ , մատմազէլ պու հաֆթա պէն կիտէր միւսիւ կէօրիւրիւմ :

—Միւսիւ , մուսամէր օլուրում , սէօյէ քէնտուսինէ , մատմազէլլէրին սիւսինէ տօգունմասըն , քէնտուսինին պիլտիզի պառօնլարընա ախպարլարընա պէնզէմէյիզ պիզ :

Գպրօցական փոքրիկ տղայ մը մաքուր գեր գրել չը կարենալով գրել , միշտ գիշերները իւր հօրը գրել կուտար իր գիրը և հետեւեալ օրը գեղագրութեան դաստուղին ներկայացնելով մրձանակի կարժանանար :

Օր մը դասատուն տղան քովը կան

չելով ըսաւ :

— Արմենակ, գիրդ մաքուր է, քիչ մը սա գրերս մաքուրը չը քաշես :

— Միւսիւ ես ցերեկ ատեն մաքուր գիր չեմ կրնար գրել, տուէք ինծի գիշերը գրեմ վաղ առաւոտ հետս կը բերեմ :

— Ի՞նչ կըսես չեմ հասկնար :

— Եթէ ինչ ըսել ուզածս հասկնալու ըլլաս նէ, մէյ մըն ալ ինծի բնաւ մրցանակ չես իտար :

ԾԱՂԿԱՔԱՂ

Փարիզու արուեստահանգիսին մէջ, չինական թատրոն մը կայ ուր արք ծպտեալ կանանց դերը կը կատարեն :

Վերջին ներկայացմանց միոյն ժամանակ, երբ խաղը կ'ուշանար, հանդիսականներէն մին կ'սկսի անհամբերութեան ցոյցեր ընել : Այն ատեն թատրոնին տեսուչն ներկայանալով կազդարար է :

— Կը խնդրուի հասարակութենէն որ ներողամիտ լինի, որովհետեւ մեր դերասանուհին ամիլուած չէ դեռ :

Ճանապարհորդ մը պանդոկին մէջ :

— Պ. պանդոկապան, ինչո՞ւ խմած գինիս Պօլտոյի գինի կը կոչէք :

Պանդոկապանն ծիծաղելով :

— Օ՛հ, երբէք խտրութիւն չեմ ներ. հարկ եղած ժամանակ Պուրկօնեի եզս կը կոչեմ :

Գիշերօթիկ վարժարանի մը մէջ, տնօրէնը տեսնելով իւր աշակերտաց ճերմակեղէններուն ծայրայեղ աղտոտութիւնն, հետեւեալ հրամանը կուտայ :

— Պէտք է որ շապիւննիդ չփոխէք :

— Հատ մը միայն ունինք :

— Հոգ չէ իրարու հետ փոխեցէք :

Պարոն մը շափաղանց գիրուկ, Բօմբէի Ծրանսէղի թատրոնը կերթայ և դիպուածաւ կը նստի նիհար և գըրեթէ կմախացեալ երիտասարդի մը քով, խեղճ նիհարը ներկայութեամբ իւր ընկերին խոշորութենէն :

— Ձեզի պէս մարդիկ լաւ կընեն

եթէ այս տեսակ վայրեր չը յաճախեն, կ'ըսէ :

— Պարոն, կը պատասխանէ անտարբերութեամբ մը առաջինն, բարեբաղդ էք որ նիհար կազմուածք մ'ունիք :

Դարուս տիեզերահոչակ դերասանուհին, Սարա Պէռնար հետեւեալ ազգը կ'ընդունի. « կը խնդրուի ձեռնէ որ . . . նօտարին երթաք ժառանգական ինդրոյ մը համար » :

Պահ մը վարանելէն յետոյ, տաղանգաւոր արուեստագէտը նօտարին կը գիմէ և ծալլուած թուղթ մը կընդունի :

Սարայ կը բանայ թուղթը և կը կարդայ. « Տիկին, պատիւ ունիմ իմացնելու ձեզ թէ՛ Ռարէլի տաղանգը ժառանգած էք . . . » :

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ՄԻԹԵՆԵՎՎԻՅԵ

Օտէսա շէհրինտէքի ասհապը սէր վէթէ տայիւր Էվրօք զազէթայարն տա կէօրիւլէն պիր տէֆթէր, շայեանը տիգգաթ օլմաղէ, պէր վէճհի տթի նաղլ օլունուր :

— Օտէսա թիւճճարընտան Մ. Բալի 28 միլեօն, Մ. Բօտօգանաքի 8 միլեօն, Մ. Անաթրա 8 միլեօն, Մ. Մարապի 6 միլեօն, Մ. Ասքինաղի 6 միլեօն, Մ. Էֆրիւսի 4 միլեօն, Մ. Բաֆալօվի 4 միլեօն, պարոն Մաչ 4 միլեօն, վէ Մ. Պրօտէսքիչ 1 միլեօն ըուպլիլք սէրվէթէ մալիք տիրէր :

Չըգան հաֆթանըն բազար կիճէսի թէքմիլ Եունանիսթանտա շէտիտ հարաքեթաթը արգ հիսս օլունմուչիտ տէ, համտ օլտուն նուֆուսճա զայեաթ վէ պիւեիւք խասարաթ վուգու պուլմամը տըր : Եալընըղ Բաթրատա վէ Միսօլունիտէ պիր գաչ խանէ եղըլմըլ տըր :

Չըգան բէնչէնպիհ կիւնիւ, ինկիլթէրրատա, նօթհ Շրօքչայրտա, Ուիթչըրչ նահիյեթսիստէ տէհէթի պիր գասըրղա վուգու պուլուպ, չէնտ տագըգա զարֆընտա խայլի խասա :

րաթա սէպէպ օլտուգտան սօնրա, սէրիան իրտտան ուզազլանմըլ տըր իչպու գասըրղանըն, քիւլիեթիլ պիր սուեուն պիրտէն պիրէ տէօքիւլմէսի կիպի զարիպ պիր կիւրիւլթիւ իլէ զուհուրի հիսս իտիլմիչ տիր : Պու կիւրիւլթիւ պէշ տագըգա գատար սիւրմէքլէ պէրապէր, աղաճլարը քէօքլէրինտէն չըգարմըլ, թարլալարտաքի օթ վէ սաման երղընլարընը տաղըթմըլ, չիֆթիլքլէրին չաթլարընը ուչուրմուչ, վէ հաթթա բէք չօգ քէօյլիւ խանէլէրինի խարապ իթմիշ տիր : Պիւեիւք պիր աղաճ, 150 մէթրօ ուզաղա աթըլմըլ : վէ պիւեիւք պիր ալ քէօքէկինին մահէլի իգամէթիւնի, եէրտէն պիր թիւյ կիպի գալտըրըպ ուզաղա աթմըլ : վէլհասըլ պիր խայլի մէսաֆէ իւղէրինտէ տահա պաղը խասարաթ վուգու կէլմիշ տիր :

Իզվիչերիանըն եէշիլ միւրէքքէպլէ թապ իտիլմիշ օլան հիւքիւմէթ պանգասընըն 50 ֆրանգըլք գայմէլէրինին մուխաթարալլ պիր զէհիրի հալլի օլտուգլարը պու քէրրէ Լօղանտա անլաչըլմըլ տըր : իչպու գայմէ տէմէթլէրինի սայմաղա մէմուր իքի քիշի պու եիւզտէն պիրտէն պիրէ խասթալանմըլլար տըր :

ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՅԲ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՆԳ ՏԵՐԻՈՅ

ԲԱՆՈՒՈՐ ԵՒ ԳՐԱԻՈՐ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՄԲ Ա. ՏԱՐԻ ՀԵՂՆԱԿ ԱՐԻՍԱԿԷՍ Ց. ՊՈՅԱՃԵԱՆ

Ազգային, Պատ. Ուսումն. Խորհրդոյ վերջին բարեփոխեալ գասուց ծըրագրին համաձայն և ներկայ Գերման մանկավարժական ուղղութեամբ, չափաքիտութեան ուսուցիչ Արիստ. Պոյաճեան էֆէնտիի պատրաստած նախակրթարանի Ա տարիէն մինչեւ Երգտարի թուարանութեան հինգ տարուոյ նոր գասընթացին Ա. տարին հըրատարակուած է : Յատկապէս կեդը. Վարչ. Պատ. Ուսումն. Խորհրդէն յանձնարարուած և վաւերացուած է :

Գին 4 զուրուչ

Վարժարանաց համար Օ/Յ 15 զեղչ կը գտնուի բոլոր գրավաճառաց քով :

ՏՕՔ- ՔԱՐԱԵԱՆՕԲՈՒԼՕՍ

Ֆրէնկի , սիտիք վէ թէնասիւլիւեէ եօլլարընըն վէ տէրի իլէթլէրինէ մախ- սուս Ղալաթատա Սանտրքճըլարտա Հէլվաճը սօգաղը քէօշէ պաշընտա Այ- նալը լօգանթասը գարչուընտա վագը 11 նուճէրօլու խանէտէ , մուաեէնէի խաթթէկեանը . պէհէր կիւն սահաթ Յտան 12է գատար խաթթա գապուլ իտէճէք տիր :

Տօքթօրը մուճալէյն խուսուսի օ- լարագ Փարիզ խաթթախանէլէրինտէ մէղքիւր իլէթլէրի եանի ֆրէնկի , էս- կի վէ եէնի պէլ սօղուըլուղունուն մէսհանէ տարլըլարընը . Ֆիւսթիւլ- լէրի , վէլ հասըլ սիտիք վէ թէնասիւ- լիւեէ եօլլարընտա թարի օլան իլէթ- լէր իլէ , տէրի խաթթալըլարընը թահ- սիլ վէ պիթ թէճրիւպէ վէ պիր չօգ վա գըթլարտան պէրու տախի իսթանպօլ- տա իճրայի թապիպլիք իթմիշ օլտու- զընտան քէնտիսինէ միւրաճաթ իտէն խաթթէկեանը ազ միւտտէթ զարֆըն- տա ուսուլ ճէտիտէ իւզրէ թէտապի վէ չիֆափէզիը իտէճէք տիր :

Ֆ Ռ Ա Ն Գ Յ Օ Ր Թ Ո Ւ Ա Չ

Տ Ե Ն Ի Չ Ս Ի Կ Ո Ւ Ր Թ Ա Գ Ո Ւ Մ Բ Ա Ն Ե Ա Ս Ը

Սէրմաեէ Ֆրանգ 0,250,000 Իհիթեաթ ազչէսի Ֆրանգ 1,270,000

Մէղքիւր գումարանիա տէնիզ գազալարընա գարչը վաբօրյարտա վէ կէ- միլէրտէ եիւքլէնիլէն մալլէրի , վէ քէզալիք բօլթա իտարէլէրինէ թէսլիմ օլունան միւճէվհէրաթ վէ եախօտ պանգնօթ էվրագը զաեէթ էհվէնիեթ վէ սուհուլէթլէ սիկուրթա իտէր :

Պու ճիհէթլէ մէպալիդի քիւլլիեէեի սիկուրթա իտէպլիմէք իչին իչպու գումարանիա էվրօբատա 13 թանէ պիւեիք սիկուրթա գումարանիալարըյա պիրլէչմիշ տիր : Պունլարըն թէքմիլ սէրմաեէ վէ իհիթեաթ ազչէսի 100,000,000 Ֆրանգը կէչէր :

էքմիլ Թիւրքիա աճէնթէսի

Հ Ա Մ Պ Ո Ւ Ի Կ Մ Ի Ի Ն Ի Խ Պ Ի Ր Լ Է Շ Մ Ի Շ

Ե Ա Ն Կ Ը Ն Ա Գ Ա Ր Շ Ը Ս Ի Կ Ո Ւ Ր Թ Ա Գ Ո Ւ Մ Բ Ա Ն Ե Ա Ս Ը

Սէրմաեէ	Ֆրանգ 8,000,000
Իհիթեաթ ազչէսի 1888 Յունիսէ գատար	Ֆրանգ 4,817,262
Սէնէվի իրատ 1888 Յունիսէ գատար	Ֆրանգ 10,069,700

Մէղքիւր գումարանեալար տէրօղիթօլար վէ խանէլէր վէ անլէր իչինտէ պուլունան մալլէր վէ մօպիլեալարը զաեէթ էհվէնիեթ վէ սուհուլէթլէ , թէէմինաթը գապիեէ թահթընտա օլարագ սիկուրթա իտէրլէր :

Իսթանպօլ աճէնթէսի

Իսթանպօլ, Պահճէ-գաբու , Եօրկիտախի խան Գ Ա Ռ Ն Ի Կ Ա Ս Տ Ո Ւ Մ Բ Ա Ն Ե Ա Ս Ը

Մալիւճաթ.—Շիրքէթլէրիմիղին Տէրիսատէթ պանքէրլէրի պուլունտն ներսէսեան Բէտէր վէ Մախտուճու էֆէնտիլէր՝ հիսապը կէօրիւլիւշ , վէ միւտիրիեթի ուճուճիեէ թարաֆընտան թաստիգ օլունճուշ հէր կիւնա զարար ու զիեանը թազմինէ թէճամիլլէ թալիմաթ ախը իլլէմիշլէր տիր :

—Ա՛ , չէ՛ . . . հարսնիքի կերակուրներն ընդհանրապէս ընտանեկան հանգամանք կ'ու- նենան . երբոր մէկը չես ճանչնար հոն , ամե- նեւին համ չես առներ :

—Կերակուրի համար չեմ ստիպեր քեզ . ինչու որ ես ալ քու կարծիքէդ եմ թէ օտա- րականի մը համար զբօսուցիչ չի կրնար ըլլալ այն . ասկէց զատ , Վապօրոն մօրեղբայրն , որ ծովու հին գայլերէն է , սիրուելու արժանի մարդ մը չէ . դժոխապարտի պէս կը հայհոյէ . առտուընէ մինչեւ իրիկուն յիշոցներու ուճաբեր կը թափէ բերնին մէջէն . Եւ երբոր կաթուած ունենայ , աւելի գէշ է : Մնաց որ , առտուան ժամը չորսին քիչ շատ խնամեալ ընթրիք մըն ալ պիտի տանք :

—Ժամը չորսին մի . . . շատ ուշ է . նայէ կնիկ մը առնելու հարկը քեզ ուրտեղները կը տանի :

—Սիրելի բարեկամ , արդէն կնիկս է որ ա- մեն բան կարգի կը գնէ . ես մինակ իր հրա- հանգներուն կը հետեւիմ :

—Ո՛ , կանուխ չէ՛ . . . : Բայց ինչ որ է , շատ աղէկ կ'ընես . եթէ առաջին վայրկենէն կը սկսի ամեն բան կարգադրել , կը տեսնամ որ գործը յաջող պիտի երթայ :

—Հիմակու հիմակ պէտք է որ բաժնուինք ,

վասն զի շատ ստիպողական գործեր ունիմ կա- տարելիք : Կը վախնամ որ բան մը կը մոռ- նամ և երբոր մէկը կարգուի , անպատ- ճառ բան մը կը մոռնայ եղբեր : Նշանածս ինձ այնչափ յանձնարարութիւններ ըրաւ որ . . . տ՛հ , փո՛ւնջը . . . նարնջենիի ծաղիկը . այս մասին կեցիր նայիմ ինչ ըսաւ ինձ :

—Ըսաւ որ ալ բան չէր ուզեր :

—Ընդհակառակը շատ բաներ ապսպրեց և ասիկայ շատ պարզ է . երբոր աղջիկ մը կար- գուելու համար մինչեւ քսան և հինգ տարու տունը կը սպասէ , մեծկակ փունջ մը իրա-ւունք ունի :

—Ըսել է որ , եթէ ուրիշ օրիորդ մըն ալ վաթսուն տարու ամուսնանայ , քառակուսի արկղի մէջ տնկուած նարնջենիի՛ մը իրաւունք կ'ունենայ . ա՛ , բայց , վայրկեան մըն ալ կե-ցիր և հասցէդ տուր . ո՛ւր պիտի կատարուի հարսնիքդ . . . եթէ կուզես որ ներկայ գըտ-նուիմ , անհրաժեշտ է այս :

—Ո՛րչափ մոռացկոտ եմ , եղբայր , կը վախ-նամ որ վաղն իրիկուն ամուսնացած ըլլալս ալ մոռնամ . Հարսնիքս պիտի կատարուի Պոնվա-լէի տունն , որ Դամբլի պուլվառին վրայ կը գտնուի . հոն հոյակապ դահլիճներ կան , ուր կրնանք ցաթկել , խաղալ , ուտել , խմել ըստ